Զեկույց

Մասիս քաղաքային համայնքի 2019 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

2020թ. համայնքում կապիտալ աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է ձեռք բերել նախագծա-նախահաշվային աշխատանքներ՝ Մասիս քաղաքի 1-ին թաղամաս 2-րդ փողոցի և 7-րդ թաղամաս 2-րդ փողոցի կոյուղագծերի անցկացման համար՝150.0 հազ. դրամի, Նոր թաղամաս թիվ 19 շենքի տանիքի հիմնանորոգման համար՝1200.0հազ դրամի և 1-3 փողոցների լուսավորության ցանցի շարունակության, 1-ին, 4, 5, 6, 7-րդ թաղամասերի, Մասիս Կայարանի Աղ. Ասատրյանի անվան փողոցի լուսավորության ցանցի կառուցման համար 2300.0հազ դրամի:

Մասիս քաղաքի 3-րդ թաղամասի 14 և 18 շենքերի բակերի բարեկարգման աշխատանքները կատարվել և հասցվում են ավարտին: Կատարված աշխատանքներին զուգահեռ տեսանելի է դառնում , որ որոշակի լրացուցիչ աշխատանքներ կատարելուց հետո բակը կունենա ավելի բարեկարգ և գեղեցիկ տեսք: Առաջարկվում է նշված աշխատանքները կատարելու համար բյուջեից հատկացնել միջոցներ կապալառուի հետ կնքված պայմանագրի գնի 10 տոկոսի սահմաններում՝ 1400.0հազար դրամի չափով:

Համաձայն ձեռք բերված նախագիծ-նախահաշվի Թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի շենքի հիմնանորոգման համար անհրաժեշտ է 10818.0 հազար դրամ:

Քաղաքի որոշակի հատվածներում՝ առկա լուսավորման ցանցի հարակից տարածքներում լուսատուներ տեղադրելու համար անհրաժեշտ են h ենասյուներ, որոնք ձեռք բերելու համար անհրաժեշտ է 980.0 հազար դրամ, մեկ հենասյան շուկայական արժեքը 70.0հազար դրամ է:

Նշված կապիտալ աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ միջոցները առաջարկվում է հատկացնել Նախադպրոցական կրթության ծրագրով նախատեսված վարչական սարքավորումների ձեռք բերման համար նախատեսված միջոցներից և ՄՊՄԿ և քաղաքային կենտրոնական գրադարան ՀՈԱԿ-ների մասնաշենքերում ջեռուցման համակարգի անցկացման համար նախատեսված միջոցներից, հաշվի առնելով , որ առաջիկա բյուջետային տարում նախատեսվում է ՄՊՄԿ ՀՈԱԿ-ի և նախկին մարզադպրոցի մասնաշենքերում իրականացնել հիմնանորոգում:

Մասիսի քաղաքապետարանի վարչական շենքի տոնական տեսքի համար անհրաժեշտ է ձեռք բերել զարդարանքներ՝ լուսային էֆեկտներով; Լուսային զարդարանքների շուկայական ընդհանուր արժեքը կազմում է 940.0 հազար դրամ:

Հաշվի առնելով սոցիալական դրամական օգնության համար դիմում խնդրանքների թիվը առաջարկվում է ընթացիկ տարվա ամար նախատեսված այլ նպաստների գումարը ավելացնել 500.0 հազար դրամով:

Աշխարհի, Եվրոպայի և հանրապետական առաջնություններում բարձր արդյունքների հասած մարզիկ-մարզուհիներին խրախուսելու նպատակով առաջարկվում է լրացուցիչ հատկացնել 300.0հազար դրամ:

Հ. Թումանյանի 150 ամյակին նվիրված մշակութային միջոցառումների շարքից «Թմբկաբերդի առումը» ներկայացմանը համայնքի ակտիվ երիտասարդների մասնակցությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է հատկացնել 180.0 հազար դրամ:

Արաջարկվում է նշված ընթացիկ ծախսերի իրականացման համար միջոցները հատկացնել համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից՝ 1220.0 հազար դրամ և ՁԼՄ ծառայությունների համար նախատեսված միջոցներից՝ 700.0 հազար դրամ:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան